ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ *Դաստիարակության մեթոդների կիրառումը տարրական դասարաններում*

ՀԵՂԻՆԱԿ *Արուս Դոլունց*

Քննարկվել, հավանության է արժանացել

_____

_____

մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդմիավորման նախագահ _____ *Ռիտա Շալունց*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _____ *Սերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽ 1 ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ
1.1 Դաստիարակության գործընթացի էությունը, խնդիրները, սկզբունքները տարրական դասարաններում
1.2 Անձի գիտակցության ձևավորման մեթոդները տարրական դասարաններում
1.3 Անձի գործունեության կազմակերպման և հասարակական վարքի փորձի ձևավորման մեթոդները տարրական դասարաններում
1.4 Վարքի և գործունեության խթանման մեթոդները տարրական դասարաններում
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության բովանդակությունն ու խնդիրները պայմանավորված են հասարակության պահանջմունքներով և անմիջականորեն առնչվում են պրակտիկային: Դաստիարակության գործընթացն ունի բավականին բարդ կառուցվածք: Այն ենթադրում է դաստիարակության նպատակի առկայություն, առաջադրված նպատակին հասնելու համար համապատասխան խնդիրների առաջադրում և լուծում, դաստիարակության բովանդակություն, նրա որևէ բաղադրամասի ուղղությամբ իրականացվող դաստիարակության մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն, ինչպես նաև ակնկալվող արդյունքներ, դաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա ազդող գործոններ և այլն:

Արդի դաստիարակության գործընթացում մանկավարժն իրականացնում է մի շարք դերեր՝ դասավանդող, աջակցող, ուղղորդող, երեխայի իրավունքների պաշտպան, ավագ ընկեր, խորդրդատու և այլն: Բազմագործ դերերն ուսուցչին օգնում է ծագած խնդիրներում արագ կողմնորոշվել, համագործակցության շնորհիվ երեխայի սեփական «Ես»-ը ձևավորելու, որոշակի հասարակության մեջ նրա պատկանելիությունը հստակեցնելու հարցերում:

Հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ դաստիարակության գործընթացը, մշտապես ենթարկվելով հասարակական կյանքի մարտահրավերներից բխող փոփոխություններին, պահանջում է նորովի մոտեցումներ, շարունակական կատարելագործում կազմակերպման, իրականացման եղանակների՝ մեթոդների: Ուստի դաստիարակության մեթոդների կիրառման առանձնահատկությունների բացահայտումը տարրական դասարաններում ժամանակի հրամայական է:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել դաստիարակության մեթոդները, բացահայտել դրանց կիրառման առանձնահատկությունները տարրական դասարաններում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել դաստիարակության գործընթացի էությունը, խնդիրները, սկզբունքները տարրական դասարաններում,
- Ներկայացնել դաստիարակության մեթոդների դասակարգը,
- Վերլուծել դաստիարակության անձնակողմնորոշված տեխնոլոգիաների կիրառությունները տարրական դպրոցում:

Ժամանակակից տարրական դպրոցի առջև դրված են դաստիարակությանը համընդհանուր, նպատակային բնույթ տալու և դպրոցականի բազմակողմանի և ամբողջական դաստիարակությունն ապահովելու խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում է դաստիարակության տեխնոլոգիաների և մեթոդների արդյունավետ նախագծում և կիրառում:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1. Դաստիարակության գործընթացի էություն, խնդիրները, սկզբունքները տարրական դպրոցում:

Դաստիարակությունը որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է անձի նպատակաուղղված ձևավորմանը: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի, հասարակության համատեղ գործունեության ընթացքում:

Հայտնի է, որ դաստիարակությունը երևան է եկել մարդկային հասարակության ծագման պահից և գոյություն կունենա, քանի դեռ գոյություն ունի ինքը՝ հասարակությունը [2, էջ 121]:

Դաստիարակությունը պայմանավորված է հասարակության պահանջմունքերով և անմիջականորեն կապված է աշխատանքի հետ: Դաստիարակության տեսությունն ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու կազմակերպման ձևերի մասին:

Ժամանակակից մանկավարժ Ս. Մանուկյանը գտնում է, **որ մարդկային ցանկացած գործունեություն դաստիարակության գործընթաց է** և ընդգծում է դաստիարկության հետևյալ սահմանումը. «Դաստիարակությունը արտաքին ներգործությունների հետևանքով մարդու մեջ առաջացած որակական հատկանիշների ամբողջությունն է» [4, էջ 40]:

Դաստիարակության՝ որպես մարդու գիտակցական գործունեության էական հատկանիշներից մեկը նպատակասլացությունն է: Մանկավարժությունը, ելնելով հասարակական օբյեկտի պահանջից, անձնավորության զարգացման օրինաչափություններից, սոցիալական պայմաններից, ձևավորում է դաստիարակության նպատակի տեսական հիմունքները [5, էջ 176]:

Դաստիարակության ողջ գործընթացը իր կազմակերպված ու չկառավարող, դրական ու բացասական, ինչպես և զարգացնող ու բթացող տեսակներով արդեն միանգամայն հնարավոր է դարձնում իր մասին միասնական կարծիքի հանգելը: Իսկ անկազմակերպ է այն դաստիարակությունը, որը կայանում է երկու տեսակ գործունեության շնորհիվ: Մեկը կազմակերպված է, սակայն ոչ դաստիարակելու նպատակով: Մյուսը՝ գործունեությունը, ոչ մեկի կողմից չի կազմակերպվում: Այսպիսով՝ ակնհայտվում է «դաստիարակություն» հասկացության բազմանշանակությունը, որը լուրջ խոչընդոտ է մեր գիտության զարգացման համար [3, էջ 36]:

Տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի բողանդակության մեջ կարևորվում են նաև տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, դաստիարակությունն ու կրոնաբարոյական արժեքների ձևավորումը: Դաստիարակության բովանդակության մեջ, բնականաբար, ընդգրկվում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, արժեքների ու վերաբերմունքի համակարգը, ինչպես նաև անձի վարքագիծը:

Կրտսեր դպրոցականի դաստիարակության խնդիրներն են՝

- տարրական դպրոցում իրականացվող դաստիարակության գործընթացն ուղղել կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը,
- կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակական, հոգևոր-բարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին,
- ձևավորել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները,
- կազմակերպել աշակերտների իմացական գործունեությունը՝ ապահովելով նրանց հասարակական գիտակցության զարգացումը,
- զարգացնել ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց /թե մեծերի, թե տարեցների/ նկատմամբ,

մշակել մարդկանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու, երկխոսություն ու հաղորդակցում վարելու կարողություններ,

- սիրո և հարգանքի միջոցով բավարարել երեխայի պահանջմունքները, ձևավորել հասարակության մեջ իր դերի և սոցիալական կարգավիճակի գիտակցում, երեխայի շուրջ ստեղծել բարենպաստ պայմաններ և այլն։

Դաստիարակության սկզբունքների էությունը տարրական դպրոցում

Դաստիարակության սկզբունքներն ընդհանուր դրույթներ են, որոնցում արտահայտված են դաստիարակության գործընթացի բովանդակության, մեթոդների կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները (պարտադիրությունը, համալիր բնույթը, նույնանշանակությունը կամ համարժեքությունը)։

Դաստիարակության ժամանակակից համակարգը ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

- երեխայի բարձրարժեքություն,
- դաստիարակության անձնային-հասարակական ուղղվածություն,
- անձի դրական որակների վրա հենվելը,
- դաստիարակության մարդասիրական բնույթը,
- անձնակենտրոն մոտեցումը,
- դաստիարակչական ներգործությունների ձևերի միամասնությունը,
- երեխան իր դաստիարակության գործընթացի սուբյեկտն է։

1.2 Անձի գիտակցության ձևավորման մեթոդները տարրական դասարաններում

Դաստիարակության մեթոդները դաստիարակողի և դաստիարակվողի համագործակցության հիմնական եղանակներն են։ Փոխկապակցված այդ գործունեության մեջ կիրառվող մեթոդներով իրականացվում է մարդկանց դաստիարակությունը։ Իրականացնողը դաստիարակն է, սակայն դաստիարակվողները պասիվ չեն։

Առանձնացնում են դաստիարակության մեթոդների հետևյալ խմբերը՝

1. անձի գիտակցության ձևավորման մեթոդներ,
2. վարքի և գործունեության կազմակերպման մեթոդներ,
3. խթանման մեթոդներ։

Դաստիարակության մեթոդ պետք է կոչվեն մանկավարժական գործունեության այն բոլոր եղանակները, հնարները, որոնք ընդունակ են առաջացնելու դաստիարակողի կողմից դաստիարակվողների համար նախատեսված գործունեությունը, արարքներն ու գործողությունները։ Ընդ որում՝ չկան լավ կամ վատ, դյուրին կամ դժվար, արդյունավետ և անարդյունավետ մեթոդներ։ Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակության տվյալ մեթոդի ճիշտ և տեղին կիրառմամբ։

Մանկավարժական գործընթացում դաստիարակության հարցում կարևոր է՝ տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու փորձը։ Նա պետք է ունենա բծախնդիր դիտողականություն, ուսումնասիրող, զննող ոգի, որպեսզի կարողանա երեխային ուսումնասիրել, բացահայտել, ճանաչել և ըստ այդմ էլ ընտրել ու կառուցել մանկավարժական գործընթացը։ Կրտսեր դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտի և նրանց շրջապատող մարդկանց, ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը։ Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, օլիմպիադաները, աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիրաները և այլն։ Պետք

է նկատի ոունենալ նաև այն, որ տարրական դասարաններում են ձևավորվում սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն։ Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնարտահայտման և ինքնագնահատման հմտություններ, ինքնուրույնության մշակմանը։

Ներկայացնենք դաստիարակության գործընթացին առնչվող մի շարք ուշագրավ դատողություններ, որոնք առաջադրել է հումանիստական մանկավարժության ներկայացուցիչներից մեկը՝ Շ. Ա. Ամոնաշվիլին իր «Բարև՛, երեխաներ» գրքում, և որոնք պետք է հաշվի առնել կրթադաստիարակչական գործընթացում [1, էջ 50-52]։

- Հումանիստական հասարակության մեջ դաստիարակությունը կարող է միայն հումանիստական լինել։ Այդպիսի դաստիարակության գլխավոր սկզբունքը երեխային դաստիարակչական գործընթացի նկատմամբ դրականորեն տրամադրելն է, նրան իր իսկ դաստիարակության գործում օգնական դարձնելը։
- Հաղորդակցումը մարդկանց կյանքի էությունն է։ Հումանիստական դաստիարակության գլխավոր մոտեցումը երեխայի՝ մեծի հետ շփման գործընթացում ուրախություն պարգևելն է, համատեղ աշխատանքի, խաղի, հանգստի պահերին հաճույք պատճառելն է։
- Սովորական ամենօրյա կյանքը և մեծահասակների փոխհարաբերությունների բնույթը մի միջավայր է, որում ձևավորվում է ապագա մարդու անձը։ Այդ պատճառով շատ կարևոր է, որ մեր ամենօրյա կյանքը, միմյանց հետ շփումը որքան կարելի է շատ համապատասխանեն այն իդեալին, երը ձգտում ենք ներշնչել երեխային։
- Մարդու հավատը մարդկանց, սեփական կենսական դիրքորոշումների նկատմամբ՝ մարդկանց միջև լիարյուն շփման և անհատի վեհացման նախահիմքն է։ Դրա համար մենք պետք է երեխայի մեջ զարգացնենք և պահպանենք մեր, իր դաստիարակների, ընկերների, մարդկանց, ինքն իր նկատմամբ ունեցած հավատը։
- Երեխան արձագանքող էակ է։ Նրա համար դժվար կլինի մեզ հասկանալը։ Այդ մենք՝ դաստիարակներս ենք պարտավոր երեխային հասկանալ և մեր դաստիարակչական պլանները կառուցելիս հաշվի առնել նրա հոգու մղումները։
- Դաստիարակությունն աննկատ և երկարատև գործընթաց է, և դրա համար պետք է խորաթափանցություն, հետևողականություն և համբերատարություն հանդես բերենք դաստիարակչական խնդիրների լուծման բոլոր կոնկրետ դեպքերում։
- Մենք՝ դասվարներս, պետք է ղեկավարվենք նրբազգացությամբ, գթասրտությամբ, բարեհոգությամբ, սիրով, քնքշանքով, անմիջականությամբ, օգնության հասնելու մշտական պատրաստակամությամբ, ապրումակցության զգացումով։ Այս բոլորը պետք է զուգակցվի երեխայի նկատմամբ պահանջկոտության, պատասխանատվության զգացումով, հայրենիքի, ապագայի հանդեպ հոգատարությամբ։
- Մենք պետք է վճռականորեն հրաժարվենք հումանիստական դաստիարակությանը հակասող և երեխայի անձը ճնշող հեղինակային այնպիսի ձևերից, ինչպիսիք են գոռալը, ինքնասիրության ոտնահարումը, ծաղրը, կոպտությունը, սպառնալիքը, հարկադրանքը։

Գործնականում այս «պատգամների» իրականացման պատրաստի մեթոդիկա չկա։ Այդ պատճառով անհաժեշտ է մշտապես ստեղծագործորեն և մարդասիրական հիմունքներով երեխաների դաստիարակության ուղիներ որոնել։ Հենց դրանում էլ պետք է արտահայտվի յուրաքանչյուր երեխայի նկատմամբ դաստիարակողի անսահման հոգատարությունը։

Դաստիարակությունը մարդու մեջ հասարակական վարքի մշակույթը ներդնելու համար առաջին հերթին պետք է ուղղված լինի նրա գիտակցության, աշխարհայացքի, իդեալների, համոզմունքների ու արժեքային կողմնորոշման ձևավորմանը: Այս խնդիրներն առավել արդյունավետ կարող է իրականացվել **համոզման մեթոդներով:**

Համոզման մեթոդների խումբն ընդգրկում է հետևյան առանձին մեթոդները.

1) դաստիարակչական թեմաներով պատմությունների մեթոդ,
2) դաստիարակչական թեմաներով զրույցների մեթոդ,
3) դաստիարակչական թեմաներով դասախոսությունների մեթոդ,
4) դաստիարակչական թեմաներով բանավեճների մեթոդ,
5) օրինակի մեթոդ:

1. Դաստիարակչական թեմաներով պատմությունների մեթոդ

Դաստիարակչական թեմաներով պատմության հիմնական ֆունկցիան մարդկանց վարքագծի դրվագները, այսպես կոչված, չեզոք դիրքից, կենդանի և պատկերավոր նկարագրության միջոցով սանին ներկայացնելն ու անուղղակիորեն նրան որաշակի եզրակացությունների մղելն է:

Ժողովրդական առածն ասում է. «Կո՛ւժ, քեզ եմ ասում, կո՛ւլա, դո՛ւ հասկացիր»: Այս առածը հիանալիորեն բացահայտում է պատմելու մոթոդի առանձնահատուկ գործառույթը՝ համոզել առանց ուղղակի հարկադրման: Սանի գիտակցությանը ուղղություն տալն է պատմելու մեթոդի գործառույթը:

Եթե անհրաժեշտ է, մանկավարժը պետք է սպասի հարմար պահի կամ որևէ միջոցով կամ հարցով հրահրի երեխայի հետաքրքրությունը «Ես ձեզ մի բան կպատմեի, բայց դուք ժամանակ չունեք»: Կամ կսկսի պատմել և կիսատ թողնի պատմությունը: Սանին դեպի անհրաժեշտ պատմությունը լսելու հակելու հնրաները բազմազան են:

Այսպիսով՝ իրադրության առկայությանը պետք է սպասել, սակայն կարելի է ցանկալի իրադրությունը խելացիորեն ստեղծել և վարպետորեն կառավարել: Դա մանկավարժի վարպետության խնդիր է: Պատմելու համար լավագույն նյութերը կարելի է վերցնել գեղարվեստական գրականությունից:

Հեքիաթներ պատմելը նույնպես ունի դաստիարակչական կարևոր գործառույթ և պատմելու մեթոդի տարատեսակ է:

2. Դաստիարակչական թեմաներով զրույցների մեթոդ

Զրույցի մեթոդի հիմնական դաստիարակչական ֆունկցիան աշակերտի կենսափորձի բացահայտելը, ակտիվացնելը և սանի փորձի ու գիտելիքների հիման վրա տրամաբանական հարց ու պատասխանի շղթայի միջոցով ունեցած փորձի և գիտելիքների հարստացման և նրան անհրաժեշտ եզրակացության մղելն է:

Դաստիարակչական տեսակետից առավել արդյունավետ է էվրիստիկ կամ սոկրատյան զրույցը:

Դաստիարակության մեծ արժեք է ներկայացնում նաև ազատ զրույցը, երբ զրույցը կարող է դուրս գալ նախանշված թեմայի սահմաններից, և դաստիարակը ընդառաջ կգնա սանի հետաքրքրություններին՝ կփորձի պատասխան տալ նաև այդ պահին ծագած հուզող հարցերին:

Առավել հաճախ կիրառվում են թեմատիկ և իրադրային զրույցները:

Թեմատիկ զրույցներ առաջարկվում է պլանավորել ուսումնական տարվա ընթացքում՝ նկատի ունենալով դաստիարակության բովանդակության կարևոր և հանգուցային հարցերի պարզաբանումը

Իրադրային զրույցները օգտագործվում են, երբ առաջացել է անհրաժեշտություն, որպես արձագանք տվյալ պահին առաջացած իրադրության և դրա հետ կապված վարքագծի նորմերի պարզաբանման համար:

Զույցը երեխային ճանաչելու լավագույն մեթոդ է: սակայն, որպեսզի երեխան լիովին «բացվի» և վստահի իր հոգու գաղտնիքները դաստիարակին և ծնողին, պետք է դրսևորել մեծագույն տակտ, պատասխանատվություն և կուլտուրա երեխայի գաղտնիքները պահպանելու հարցում: Նրանից ստացած ինֆորմացիան չի կարելի առիթ դարձնել իրեն ամբաստանելու կամ ճնշելու հհամար: Նման մեկ-երկու դեպքը բավական է, որ խզվի երեխայի և մանկավարժի կամ ծնողի հոգևոր և բարոյական կապը: Նման դեպքում երեխան այլևս ոչինչ չի հայտնի նրանց, կվերածվի նրանց համար անիմանալի օբյեկտի:

Դաստիարակության թեմաներով զրույցները պետք է կախված լինեն միմյանց հետ: Դաստիարակը պետք է վերլուծի յուրաքանչյուր զրույցի ընթացքը, արդյունքները, պարզի, ինչ կարևոր եզրակացություններ ձեռք բերեցին, հետագայում ինչի վրա կարելի է հենվել և ինչն ուղղել:

3. Դաստիարակչական թեմաներով դասախոսությունների մեթոդ

Դաստիարակչական թեմայով դասախոսությունների հիմնական ֆունկցիան տեսականորեն հիմնավորված, ընդհանրացված աշխահայացքային գիտելիքների, համոզմունքների և իդեալների ձևավորումն է:

Դաստիարակչական խնդիրները պետք է բխեն վեհ գաղափարից, պատանեկությանն ու երիտասարդությանը մղեն բարոյական բարձր արժեքների, մեծագործությունների, հայրենասիրության, **մարդասիրության, ազնիվ ու վեհ քաղաքացիական վարքագծի** [6, էջ 168]:

Դաստիարակչական թեմաներով դասախոսությունների կարևոր թեմաներ են առողջապահությունը և սեռական կյանքի ոլորտը՝ որպես սեռական լուսավորության կարևոր միջոց: Այսպիսի թեմաներով դասախոսություն կադալու պետք է հրավիրել առողջապահության, էթիկայի, էսթետիկայի ոլորտի մասնագետներին: Այսպիսի դեպքերում ուսումնական հաստատության ներկայացուցչի՝ դաստիարակի խնդիրն է լինել ակտիվ ունկնդիր և հետագայում օգնել իր սաեների անհրաժեշտ գիտելիքները ամրապնդելուն:

4. Բանավեճի մեթոդ

Բանավեճը դաստիարակության առավել բարդ մեթոդ է: Բանավեճի գլխավոր խնդիրը սանի դիրքորոշման ակտիվացումն է, նրան իր հայացքները և համոզմունքները պաշտպանելու անհրաժեշտության առաջ կանգնեցնելը: Բանավեճի մեթոդի հիմնական ֆունկցիան սեփական տեսակետը պաշտպանելու կարողության ձևավորումն է: Բանավեճի խնդիրն է սովորեցնել խոսել գաղափարի շուրջ, հակադրվել գաղափարին և ոչ թե իրենց ընդդիմախոսի սանին:

Պետք է սովորեցնել բանավեճի հանգիստ՝ խոր հարգանք դրսևորելով ըդդիմախոսի անձի և գաղափարի հանդեպ:

Սակայն անհրաժեշտ է սովորեցնել տիրապետել բանավեճի ամբողջ զինանոցին, այդ թվում՝ սոփեստությանը և կեղծ ապացուցման ձևերին [6, էջ 170]:

Առաջին քայլը պետք է լինի հրատապ թեմայի ընտրությունը, այնպես, որ դասարանը ձգտի ակտիվորեն մասնակցել:

Բանավեճի կազմակերպմանը պետք է հաղորդել հանդիասվորություն, պատշաճություն և կարևորություն, սահմանել ելույթների, մասնակիցների վարքի կանոններ: Խորհուրդ տալ ավելի տոնական տեսքով ներկայանալ բանավեճին, սակայն խուսափել ուշադրություն շեղող էֆեկտներից:

Հանգիստ կարելի է ամեն ինչ իմաստավորել, հաշվի առնել հետագա դաստիարակչական աշխատանքի, նույնիսկ նույն թեմայով ավելի ուշ նոր բանավեճ կամ բանավեճեր կազմակերպելու հնարավորությունը:

Բանավեճի հետագա իմաստավորումը նույնպես մանկավարժական խնդիր է և դաստիարակի պարտականությունն է:

5. Օրինակի մեթոդ

Օրինակը զննականությունն է դաստիարակության գործընթացում:

Թեև օրինակը սերտորեն կապված է պատմելու և նկարագրելու հետ, սակայն այդ միջոցները տվյալ դեպքում հանդես են գալիս որպես հնարներ: Օրինակին բնորոշ են բերլուծության, խմբավորման, դասակարգման հնարները: Օրինակը կիրառելիս վարքի նմուշից պետք է հեռացնել երկրորդական, պատահական գծերը, առավել ցայտուն արձնել ընդօրինակման ներկայացվող հատկություններն ու վարքի դրսևորումները:

Օրինակի արդյունավետության պայմաններն են.

1) Օրինակը պետք է գրավիչ լինի և արժևորվի սանի կողմից: Օրինակի օբյեկտը պետք է օժտված լինի հեղինակությամբ, բարոյական լուսապսակով:
2) Օրինակին հետևելը պետք է համապատասխանի սանի հրատապ պահանջմունքներին, նրա հեռանկարային նպատակին և նարոյական մոտիվներին, աշխարհայացքին և սկզբունքներին:
3) Օրինակում ընդօրինակման ենթակա նմուշը պետք է լինի հստակ ներկայացված, երկրորդական և պատահական հատկանիշներից զատված, իսկ անհրաժեշտության դեպքում քննադատական վերլուծությամբ՝ օբյեկտիվ գնահատումով:
4) Օրինակը՝ որպես վարքի նմուշ, պետք է արժևորվի մերձավորների և հասակակիցների միջավայրում:

Պետք է նկատի ունենալ, որ վատ օրինակը նույնպես ունի հզոր դաստիարակչական ներգործություն: Եթե լավ օրինակով սովորեցնում ենք՝ ինչպես պետք է լինի, ապա վատ օրինակի վրա պետք է ցույց տալ՝ ինչպես չպետք է լինի: Ուրիշի սխալների վրա սովորում են իմաստունները: Կարիք կա՞ արդյոք թմրամոլ դառնալ, որպեսզի սեփական փորձով հասկանանք դրա կործանարար ազդեցությունը: Բավական չէ՞ տեսնել և հասկանալ արդեն սխալված մարդու տառապանքն ու դժբախտությունը: **Վատ օրինակը ցույց տալով և լուսապսակից զրկելով այն՝կատարում ենք նաև կանխարգելիչ խնդիր** [6, էջ 162-175]:

1.3 Անձի գործունեության կազմակերպման և հասարակական վարքի փորձի ձևավորման մեթոդները տարրական դասարաններում

Անձի գործունեության կազմակերպման մեթոդների հիմնական դաստիարակչական ֆունկցիան սանի վարքագծի, կարողությունների, հմտությունների և սովորույթների ձևավորումն է:

Անձնավորության վարքագծի կարևոր հատկանիշը միասնությունն է՝ իր փոփոխման ընթացքի մեջ: Հետևաբար, պետք է ապահովվեն վարքի տարրերի սերտ միասնությունը ամբողջականությունը, որոնց ձևավորումն անմիջականորեն բազայավորվում է նրա գիտակցության վրա՝ ապահովելով անձնավորության վարքի կանխատեսելի ընթացքը վարքի հասարակայնորեն արժևորված ձևաչափը:

Անձի գործունեության կազմակերպման մեթոդների խմբում ընդգրկված են **վարժությունների և ընտելացման, պահանջի և հրահանգավորման, դաստիարակչական իրադրությունների ստեղծման կամ բնական հետևանքների, խաղի, մրցության մեթոդները**:

1) **Դաստիարակչական վարժությունները հմտությունների և կարողությունների** ձևավորման ամենակարևոր միջոցներն են և կրում են դիդակտիկական վարժությունների հիմնական հատկանիշները. կրկնություն, վերահսկողություն, ամրապնդում:

Վարժությունները հարկավոր են նույնիսկ երեխային անհրաժեշտ ամենահասարակ թվացող հմտությունների ձևավորման համար՝ հագնվել, լվացվել, ատամները մաքրել, շորերը, գրքերը դասավորել պահարանում և այլն: Այս տիպի վարժությունների ծավալը մեծ է հատկապես ավագ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում: Ըստ հատուկ կատարված հետազոտությունների՝ կան այնպիսի հմտություններ, որոնց ձևավորումը պահանջում է մեծ թվով կրկնություններ, օրինակ՝ պարզված է, որ այնպիսի պարզ հմտության ձևավորումը, ինչպիսին կոշիկի թելերը հանգուցելն է, փոքրիկից պահանջում է կրկնություն ավելի քան երկու հարյուր անգամ [9, էջ 118]:

Վարժության կարևոր տարրը ընտելացումն է: Մարդը հարմարվելու մեծ հնարավորություն ունի: Նա հարմարվում է ինչպես լավին, այնպես էլ վատին: Մարդը հարմարվում է ամեն ինչին, և երբ հարմարվում է վատին, նան վերափոխելը շատ դժվար է: Եթե ուզում ենք, որ մարդը լինի գեղեցիկ ու կատարյալ, նրա շրջապատում ևս ամեն ինչ պետք է լինի այդպիսին:

Մանկության տարիներից երեխաներին պետք է ընտելացնել կատարյալին, բարուն, ազնիվին և վեհին, այլապես հետո շատ ուշ կլինի: Ամեուր, հատկապես դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում, շրջապատում, պետք է լինի մաքուր, գեղեցիկ, հարմարավոտ: Հաճախ մատչելի և պարզ գեղեցկությունը հսկայական դաստիարակչական դեր է կատարում:

2) **Պահանջի և հրահանգավորման մեթոդ:** Մանկավարժության տեսության մեջ տարբերակվում են պահանջի հետևյալ տեսակները.
   - անուղղակի պահանջ
   - պահանջ-խոհուրդ, որը հենված է դաստիարակի հեղինակության հարկադրանքի վրա: Պահանջ-խորհրդի իմաստը հենց նա է, որ երեխան, չկատարելով դաստիարակի պահանջ-խորհուրդը, «քաղի» դրա դառը պտուղները, ափսոսա և մյուս անգամ ավելի ուշադիր գնահատի խորհրդի արժեքը:
   - պահանջը՝ խաղային ձևավորմամբ, օգտակար է հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում:
   - պահանջ-հրահանգավորման դեպքում բացատրվում է պահանջի կատարման ողջ ընթացքը:

3) **Դաստիարակող իրադրությունը** կյանքի բնական իրադրությանն այնպիսի ուղղություն տալն է, որի ընթացքում հանգամանքները պարտադրում են սանին կատարել այն, ինչ անհրաժեշտ է, և որի արդյունքում ձևավորվում են անհրժեշտ հմտություններ:

   Դաստիարակչական իրադրության կարևոր հատկանիշներն են.
   - իրադրության բնական՝ կենսական լինելը,
   - սանի դրական հակումների հաշվառումը, նրան լավ ճանաչելը,
   - սանի կարողություններն ու ընդունակությունները նպատակային օգտագործելը,
   - նրան սիրած գործ հանձնարարելը և դրա միջոցով բացասական հատկանիշների հաղթահարումը,
   - անցանկալին ցանկալիով միջնորդավորելը,
   - ձևավորվող իրադրության դաստիարակչական ֆունկցիաների պլանավորումը:

Դաստիարակող իրադրությունների մեթոդի գաղափարը առաջ է քաշել Ժ. Ժ. Ռուսոն՝ անվանելով այն բնական հետևանքների մեթոդ: Դաստիարակչական իրադրությունների մեթոդը հիանալի է ներկայացված հայ նոր մանկավարժության հիմնադիր Խաչատուր Աբովյանի «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկներին» գրքում:

4) **Խաղի մեթոդ:** Խաղը մարդու գործունեության կարևոր ձև է: Այն ունի զարգացնող, դաստիարակող և հոգեթերապևտիկնշանակություն, որով և պայմանավորված է խաղի մեթոդի բացառիկ դաստիարակչական արժեքը:

Խաղի՝ որպես դաստիարակության մեթոդի հիմնական ֆունկցիան իրականում անմատչելի հարաբերություններ սանին մատչելի դարձնելը և ծավալվող խաղային գործունեությամբ անհրաժեշտ որակների ձևավորումն է: Խաղն ունի նաև գործունեությունը մոտիվացնելու և խթանելու հնարավորություններ:

Դաստիարակչական գործունեության ընթացքում կիրառվում են խաղի մեթոդի հետևալ տարատեսակները

ա) Գործնական խաղեր: Գործնական խաղերը կարելի է կիրառել քաղաքավարության դաստիարակման և օտար լեզուներ սովորեցնելիս՝ միաժամանակ դրանց հաղորդելով դաստիարակչական արժեք:

բ) Դերային խաղեր: Կարևորն այն է, որ դերը ապահովի յուրաքանչյուր աշակերտի անհրաժեշտ որակների ձևավորումը:

Օրինակ՝ դասվարնն ուզում է «Ծովային անձնակազմ» խաղն օգտագործել կարգպահություն, զսպվածություն, քաղաքավարություն դաստիարակելու համար: Ծովայինների դերով հրապուրված աշակերտները արագ ու հստակ կերպով կատարում են բոլոր հրամաններն ու «նավի» վրա սահմանված կենսակարգը և հեշտությամբ են յուրացնում այն վարքի նորմերը, որոնք առաջ սիրով չեն կատարում:

5) **Մրցության մեթոդի** հիմնական դաստիարակչական ֆունկցիան անձնավորության կամային որակների ձևավորումն ու ամրապնդումն է: Մրցություններն անկասկած ունեն անձնավորության գործունեությունը խթանող ու գնահատող ֆունկցիա, սակայն, որպես դաստիարակչական ներգործություն, այն իրականացվում է սանի գործունեության կազմակերպմամբ, որը բնորոշում է մրցությունը՝ որպես անձնավորության գործունեությունը կազմակերպող մեթոդ:

Մրցության կազմակերպման ժամանակ երեխաների բոլոր ապրումները որոշվում են միայն առաջնության համար պայքարելու և պարգևատրվելու ձգտումով: Այդ դեպքում տվյալ գործոնի դաստիարակչական ներգործությունը խիստ թուլանում է: Նման դեպքում գործունեության հիմնական դրդապատճառը ուժեղացնելու փոխարեն այն շփոթեցվում, փոխարինվում է այլ բանով: Դա կարող է դառնալ բացասական գծերի փառասիրության, դատարկ փառամոլության, ուզածդ գնով ընկերներից առաջ անցնելու ձգտում ձևավորելու պատճառ:

Այսպիսով, գործունեության կազմակեպման մեթոդների արդյունավետության հիմնական պայմանը կիրառման համակարգվածությունն ու պարբերականությունն է, նույնական կրկնությունը՝ որոշակի հաճախականությամբ, որը ելնում է պարզ կանոնների և տեխնիկական բնույթի պահանջներից:

1.4 Վարքի և գործունեության խթանման մեթոդները տարրական դասարաններում

Մեթոդների այս խումբն ընդգրկում է խրախուսանքն ու պատիժը:

1. Խրախուսանքը սանի վարքգծի և արաքների դրական գնահատման ձև է: Նրա հիմնական գործառույթը սանի դրական վարքագիծը խթանելը, նրան ինքնավստահություն ներշնչելը և ավելի լավ արարքների մղելն է:

Խրախուսել նշանակում է ընդունել սանի արաքների հասարակական արժեքավորությունը, ամրապնդել սանի հավատը իր ուժերի նկատմամբ և խթանել մրա արժեքավոր գործունեությունը։

Խրախուսանքը կապված է դրական հույզերի և վեհ զգացմունքների հետ։ Ստոր, մանր, քաղքենիական պահանջմունքները խթանող խրախուսանքը հումանիստական մանկավարժության տեսակտից անարժեք է։

Խրախուսանքը հանդես է գալիս, որպես արարքի դրական գնահատման ձև։ Այս իմաստով խրախուսանք է նաև երեխայի վատ, նույնիսկ հանցագործ և անբարոյական արարքները դրական գնահատելը, դրանց հավանականություն տալը։

Պատահում է, երբ դաստիարակը կամ ծնողը, չկարողանալով լուրջ գնահատել երեխայի այս կամ այն արարքի վտանգավոր հետևանքը, անզգուշորեն խրախուսում է երեխայի «մանր» չարաճճիությունը։ Նա ոլորել է հավի վիզը՝ ոչինչ։ Խեղդում է կատվին և շանը՝ ոչինչ։ Խլել է խաղընկերոջ խաղալիքը և հրճվում է նրա տառապանքով, իսկ մայրը մեղմորեն ժպտալով շոյում էր իր «քաջի» գլուխը։ Ժողովրդական առածն ասում է. «Տղա ձու գողացավ, մայրը գովեց։ Տղան մեծացավ և ձի գողացավ»։ «Ձու գողացողը ձի էլ կգողանա»։ Խրախուսել կարելի է միայն իսկական դրական, հասարակայնորեն արժեքավոր արարքները։

Խրախուսանքով պետք է առաջին հերթին գնահատվի սանի ներքին ուղղվածությունը դեպի լավն ու բարին, բայց նաև նրա ձեռք բերած իրական արդյունքը։ Խրախուսանքը պահանջում է գնալ դեպի բարին՝ մեծացնելով պահանջները սանի նկատմամբ։ Այդ պատճառով էլ կարիք չկա անընդհատ խրախուսել սանի կողմից իր պարտականությունների սովորական կատարումը։ Արդյունքների խրախուսումը թեև ոչ առաջնային, սակայն կարևոր խնդիր է, որպեսզի երեխան ոչ միայն լավ գործ կատարելու ցանկությամբ և ջանքերով աչքի ընկնի, այլև ձգտի լավագույն արդյունքների։ Յուրաքանչյուր տարիքում այն պետք է փոխի իր ձևն ու բովանդակությունը։

Ուրիշների գովեստները, պարգևն ու խրախուսանքը հասուն մարդը կարող է մերժել և նույնիսկ համարել իր արժանապատվության համար վիրավորանք**, եթե խրախուսանքը կամ պարգևը իրեն տրվում է սեփական հակադիր մարդկանց կողմից։**

Խրախուսանքը կարող է լինել բարոյական և նյութական։ Բարոյական խրախուսանքի ձևերն են հավանություն տալը, շնորհակալություն հայտնելը։ Երբեմն հասարակ ժեստը կամ ժպիտը, առանց խոսքերի, կարող է կատարել լուրջ խրախուսանքի դեր։

2. Պատժի մեթոդ։ Պատիժը դաստիարակության հնագույն մեթոդներից է։

Հին Սպարտայում ասում էին. «Տղայի ականջը մեջքին իջեցված հարվածով է բացվում» [6, էջ 190]։

Ժ. Ժ. Ռուսոն, ըմբոստանալով մարդու նկատմամբ ամեն մի պատժի և հարկադրանքի դեմ, դրանց հակադրեց բնական հետևանքների մեթոդը։

«Երեխան պետք է անի այն, ինչ ինքն է ցանկանում»։ Մանկավարժը թող ստեղծի այնպիսի պայմաններ, որ երեխան իր ցանկութամբ կատարի «այն, ինչ դաստիարակն է ցանկանում, թող հանգամանքները դաստիարակեն սանին» [6, էջ 190]։

Հումանիստական որոշ մանկավարժական ուղղություններ, պատիժը համարելով դաստիարակության կարևոր մեթոդ, այն գնահատում են որպես սանի անընդունելի արարքների բացասական գնահատման ձև։ Ամբողջ հարցն այն է, որ սանի վարքագծի և արարքների բացասական գնահատումը կարող է հենվել նրա գիտակցության վրա, առանց նրան նվաստեցնելու կանխարգելել նրա անընդունելի վարքագիծը և բարձրացնել նրա ինքնավստահությունն ու ինքնահարգանքը, խթանել դրական վարքագիծը։

Պատժի իմաստը հումանիստական դիրքերից, հետևյալն է.

1) Պատիժն օգնում է սանին հասկանալ իր կատարած արարքների սխալ և անընդունելի լինելը շրջապատի համար և իր անձնական ճակատագրի տեսանկյունից։

2) Պատիժն ոչ թե սանի, անձնավորության, այլ նրա արարքի բացասական գնահատման ձևն է։ Պատժի նպատակն է ասել սանին, որ նրա արարքն է վատ ու անընդունելի, իսկ ինքը հարազատ է միջավայրին, թանկ է դաստիարակի համար, ինքը լավն է, իսկ տվյալ պահին նրա արարքը անհարիր է իր դրական կերպարին, գտնել և նշել սանի դրական կողմերը, որոնց օգնությամբ կարելի է հաղթայհարել բացասական գծերը։

3) Պատիժը պետք է օգնի սանին լավը դառնալ, իր վատ արարքը հաղթահարել և կոլեկտիվի ու շրջապատի հետ համերաշխության դուռ բացի սանի առաջ։

4) Պատիժն անիմաստ է, եթե այն երեխայի համար չի դառնում իր սխալն ուղղելու արդյունավետ ուղեցույց, եթե չի ապահովում իր վատ արարքն ուղղելու, այն լավով փոխարինելու նրա գործունեությունը։

Պատժի արդյունավետ պայմաններն են.

ա) Սանի գիտակցության վրա հենվելը կարևոր է, որ նա հասկանա իր սխալը։

բ) Պատիժը պետք է լինի լիովին արդարացի, չի կարելի պատժել ենթադրելով, կասկածելով։

գ) Պատիժն արդյունավետ է այնպիսի պայմաններում, երբ սանը այն համարում է անհրաժեշտ և իր արարքների բնական հետևանք։

դ) Պատիժը չափազանց սուր գործիք է, քան դաստիարակչական որևէ այլ ներգործություն։ Այն պետք է կիրառվի առավել նուրբ տակտով և զգուշորեն՝ **առաջին հերթին նկատի ունենալով մանկավարժական էթիկայի «Մի՛ վնասիր» պահանջը։**

ե) Պատիժը առավել, քան դաստիարակչական որևէ այլ նորգործություն, պահանջում է ոչ միայն անհատական մոտեցում, այլև իրադրության առանձնահատկությունների հաշվառում՝ օբյեկտիվ և ճիշտ գնահատում։

Պատժելու իրավունքը ելնում է ծնողի և դաստիարակի քաղաքացիական պարտքից։

Ոչ բոլորն իրավունք ունեն երեխային, սանին պատժելու։ Պատժելու իրավունքը խստորեն սուբօրդինացված է, ոչ ոք, այդ թվում՝ երեխայի հարազատ ծնողը՝ իրավունք չունի իր երեխային պատժելիս անցնել օրենքի, բարոյականության և մանկավարժական անհրաժեշտության սահմանները։ Իսկ կոլեկտիվի պահանջով սանին պատժելը միշտ չէ, որ կարող է ճիշտ և արդարացի լինել։ Պատիժը պետք է լուծի անհատի և կոլեկտիվի միջև ծագած կոնֆլիկը։ Եթե պատժի նպատակը անհատին ճնշելը և խմբի շահերին ենթարկելն է, այն հեռանում է բարձրագույն բարոյական արժեքից՝ արդարության սկզբունքից և առաջ է բերում անհատի բողոքը։ **Արդարությունը ծնում է իրավունք, անիրավությունը՝ կոնֆլիկտ** [6, էջ 193]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով «Դաստիարակության մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» վերնագրով հետազոտական աշխատանքը՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների.

- Տարրական դպրոցում իրականացվող դաստիարակության գործընթացը պետք է ուղղել կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը։
- Կազմակերպված և զարգացնող դաստիարակության գործընթացն իրագործվում է ճիշտ ընտրված և նպատակային կիրառվող մեթոդների միջոցով։
- Դաստիարկության մեթոդները դասակարգվում են անձի գիտակցության ձևավորման, հասարակական վարքի, փորձի ձևավորման և վարքի, գործունեության խթանման մեթոդների խմբերի։
- Տարրական դասարաններում դաստիարակության մեթոդների կիրառումը նպատակային ու արդյունավետ է դպրոցի և ընտանիքի համագործակցության պայմաններում։

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամոնաշվիլի Շ. Ա., Բարև՛ երեխաներ, Ձեռնարկ ուսուցչի համար, 1990թ.:
2. Ասատրյան Զ. Ա., «Տարրական հրթության մանկավարժություն», Երևան, 2017թ.:
3. Մանուկյան Ս. Պ., «Մանկավարժագիտություն», Երևան», 2002թ.:
4. Մանուկյան Ս. Պ., «Ընդհանուր Մանկավարժագիտություն» (Նոր դասընթաց), «Զանգակ-97» հր., Երևան, 2005թ.:
5. Ղույումչյան Գ. Ե., «Մանկավարժություն» Գիրք 1, Երևան, 2005թ.:
6. Ղույումչյան Գ. Ե., «Մանկավարժություն», Գիրք 2, Երևան, 2005թ.:
7. Պետրոսյան Հ.Հ., «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ», Երևան, 2012թ.:
8. Սահակյան Կ. Գ., Մանկավարժություն առարկայի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Երևան, 2008թ.:
9. Подласый И. П., Подагогика часть 2, М.Б “ВЛАДОС”, 2002г.